ՁԱՅՆ ԲԱՋՄԱՑ

Անհրաժե՞շտ էք գտնում արդեօք յարաբերութիւնների պահպանումը Մոսկուայի կամ կենտրոնի հետ, եթէ դրանով նաեւ նպաստում ենք Արցախի հարցի լուծմանը:

Նորայր Շահբազեան, հրապարակագիր.- Բանակցութիւնները կենտրոնի հետ անհրաժեշտ են: Վերջապէս Հայաստանի կառավարութիւնը պիտի ընդունի այն փաստը, որը պարզ է արդէն բոլորին՝ կայսրութիւնը չի փլուզում, այլ ձեւափոխում է:

Նոյնիսկ եթէ չլինէր Արցախի հարցը, կրկին պէտք էր բանակցել, այնպէս, ինչպէս անում են բալթեան հանրապետութիւնները: Բայց մենք ունենք շատ կարեւոր խնդիր՝ արցախահայութեան անվտանգութեան ապահովումը: Այն թեզը, որ «եթէ չլինէր կենտրոնը, մենք լեզու կը գտնէինք Ադրբեջանի հետ»՝ ճիշտ է, բայց կենտրոնը կայ, վերանալու մտադրութիւն չունի եւ Ադրբեջանի վարքագիծը կախուած է կենտրոնից: Այսպիսով, Արցախի հարցով պէտք է բանակցել միայն ու միայն կենտրոնի հետ:

Մենք պէտք է հասկանանք, թէ ինչ գին է պահանջւում վճարել ժողովրդի անվտանգութեան համար:

Վարդան Բախշեան, պատմաբան.- Ըստ իս, Արցախի աղէտը եւ օրհասական այս վիճակը ամբողջապէս վտանգում է հայութեանը: Միեւնոյն ժամանակ նպատակային միտում է դարձել Զանգեզուրը, որի նկատմամբ բացայայտ պահանջ է յայտնում Ադրբեջանը: Փաստը՝ Գորիս-Կապան կենսական ճանապարհի, Կապանի արուարձանների, Խընձորեսկի գնդակոծումները: Զը-պէտք է մոռանալ Սիւնիքի ամենաթոյլ օղակի՝ Մեղրու վիճակը: Հասկանալի է «Զանգեզուր» զբաղող պատնէշի վերացման հեռահար նպատակադրութիւնը: Արդէն իսկ միայն այս փաստերը եւ պայմանները ի չիք են դարձնում մեր անկախութիւնը: Քաղաքական պահի ճիշտ գիտակցութիւնը եւ հեռատես հաշուարկը կարող են իրականացնել մեր ծրագրերը, որի համար էլ կարեւոր է դառնում Ռուսաստանի եւ կենտրոնի հետ յարաբերութիւնների նոր ձեւ որդեգրելը:

Արա Ռուբէնեան, ինժեներ-ծրագրաւորող.- Ես կարծում եմ, որ այսօր անհրաժեշտութիւն է Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ կապը, մանաւանդ որ, այդ կապը յոյս է ներշնչում Արցախի պահպանութեանը: Ես կարծում եմ, որ ամեն մի փոքր ազգ գոյատեւելու եւ հզօրանալու համար, յամենայն դէպս սկզբնական շրջանում, պէտք է ունենայ կողմնորոշում: Քանի որ մեզ շրջապատում են երկու հզօր պետութիւններ՝ Ռուսաստանը եւ Թուրքիան: Թուրքիայի հետ մենք ունենք շատ բաց հարցեր, բացի այդ, Թուրքիան ունի ամերիկեան կողմնորոշում, մենք չենք կարող յոյս դնել ոչ ԱՄՆի եւ ոչ էլ Թուրքիայի վրայ: Մեզ մնում է միայն Ռուսաստանը:

Խնդիրը թերեւս այն է, որ անկախութեան գործընթացի յաջողութեան համար անհրաժեշտ է նպաստաւոր քաղաքական պայմանների ստեղծում եւ՛ միջազգային յարաբերութիւններում, եւ՛ Խորհրդային Միութեան շրջանակներում:

Հարցազրոյցը վարեց Զաւէն Վարդանեանը: